

ԱՐԵՎ ԼՐԱԳՐԻ ԾՆՆԴՈՑԻՆ ՄԱՍԻՆ

ՎԱՋԷ ՂԱՋԱՐԵԱՆ

ՄՈՒՏՔ

Ռամկավար Ազատական հյուսակցութեան ներկայիս հրատարակուող լրատու թերթերուն աննստարեցն է Գա՛հրէի Արեւը, որուն առաջին թիւը լոյս տեսած է 1915ի Մալխ Ափն:

Հրատարակի վրայ ժլատ են տեղեկութիւնները անոր հրատարակութեան պարագաներուն եւ առնուած սկզբնական քայլերուն մասին:

Թերթին ծննդոցը ներկայացնող հեղինակներ սովորութիւն դարձուցած են նշել կապը անոր եւ 1908ի Մալխ Ափն Երուանդ Օտեանի՝ խմբադրութեամբ լոյսին եկած նոյնանուն թերթին միջեւ քանի մը պատճառներով, ինչպէս՝ երկու թերթերուն անունի եւ արտօնազրի նշխութիւնը, ապա նաեւ Վահան Քէֆեանի,¹ Լեւոն Մկրտիչեանի, Միքայէլ Կիւրճեանի՝ ներկայութիւնը երկու թերթերուն մէջ եւ շուրջ՝ զանազան հանգամանքներով ու դերերով:

Մեր նպատակէն դուրս է հակել Երուանդ Օտեանի Արեւին վրայ Հետաքրքրուողներ կրճան անոր վերաբերեալ տեղեկութիւններ քաղել Օտեանի յուշերէն կամ Գրիգոր Պատմեանի Երուանդ Օտեանի Արեւը ուսումնասիրութենէն՝, կը վարուիք այսպէս, որովհետեւ մեր կարծիքով Օտեանի կարճակեաց թերթը անհաստի մը սեփականութիւնն ըլլալու հանգամանքին իսկ թերումով չի կրնար ըստ էութեան նոյնացուիլ իբրեւ քաղաքական կազմակերպութեան մը՝ Հայ Սահմանադրական Ռամկավար հյուսակցութեան խօսափողը ներկայացող թերթի մը կնա, որուն արտօնատէրն ալ արդէն ո՛ր թէ՛ Օտեանն էր, ալ՝ Լեւոն Մկրտիչեանը:

Արշակ Ալպոյանեան կը հաղորդէ թէ՛ Համալսարանին Առաջին Պատերազմի օրերուն, Գա՛հրէ, որ սկսած էր փոխարինել Պոլիսը իբրեւ արեւմտաւարութեան ուղղութիւն տուող կեդրոն, թէ՛ դաշնակցականներ եւ թէ՛ ասմկավարներ պէտքը կը զգային իրենց սուսնմին պաշտօնաթերթերն ունենալու: Դաշնակցականները կը յաջողին սեփականել Ծուռաբեր թերթը եւ անոր առաջին թիւը լոյսին յանձնել 1915ի Մարտ 30ին, իրենց յարձակումներուն թիրախ դարձնելով՝ ուսմկավարները, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւնը (ՀԲԸՄ), որուն կեդրոնական գրասենեակը տակաւին կը գտնուէր Գա՛հրէ, Ազգային Պատուիրակութիւնը, անձամբ Պօղոս Նուպարը՝, եւ ուրիշներ:

Որպէսզի կարելի ըլլար հակազդել, անհրաժեշտ էր տարբեր թերթ մը ու քանի որ նոր թերթի հրատարակութեան արտօնազրի կարելի չէր ապահովել պատերազմական վիճակի պատճառով, կը մտածուի վերանորոգել արտօնազրի Արեւ թերթին, որուն նախաձեռնարկ եղած էր Երուանդ Օտեան 1908ին:

Համաձայն Ալպոյանեանի, Միհրան Տամատեան¹ եւ Լեւոն Մկրտիչեան, երկու ընդուն ասմկավար գործիչներ, կը դիմեն Պօղոս Նուպարի եւ կը խնդրեն, որ միջնորդելով ներքին գործոց նախարարին մօտ՝ ապահովէ վերահրատարակութեան արտօնազրի Նուպար կը հաւանի, արտօնութիւնը ձեռք կը բերուի եւ Մկրտիչ-

եան կ'ըլլայ արտոնատէրը, Տամատեան՝ Հրատարակիչը, իսկ Քէֆէեան՝ խմբագրատեսը՝

Թերթին առաջին օգնական-խմբագիրի պարտականութիւնը կը զտաւուր բանաստեղծ Մարտիրոս Ոսկեանի՝

Հետագայ տողերը - զազուած՝ անտիպ դիւանային փաստաթուղթերէ, որոնք շատ հաւանաբար մաս կազմած են Վահան Մալէզեանի դիւանին, եւ մեզի զտաւուրուան են ՀԲԸՄի Փարիզի գրասենեակի հանգուցեալ անօրէն Արթուր Համբարձումեանի կողմէ - պիտի գան նոր տեղեկութիւններ աւելցնել ցարդ ծանօթ նիւթերուն եւ աւելի յստակ պատկերացում մը սույ Արեւի ծննդոցին եւ խանձարուարային շրջանին վերաբերեալ:

ԴԻՒԱՆԱՑԻՆ ՆՌԻԹԵՐ

4 Մայիս 1915ին Լեւոն Մկրտիչեան ՀԲԸՄի ուղղուած նամակով մը կ'ըսէ՝ «Պատիւ ունիմ ծանուցանել թէ՛ այս առաւօտ Ենթին Գործոց Կարգաբարութիւնն են ստացայ Արեւ թերթին արտոնագիրը»:

Այսպէս է որ պաշտօնագէս կը սկսի մեր ցննարկման նիւթ՝ Արեւ ցրազրին պատմութիւնը:

Մկրտիչեան վերոյիշեալ նամակին մէջ կը խնդրէ որ անմիջապէս իրեն առաջուրին խոստացուած գումարները եւ ՀԲԸՄի շարտասահմանեան անդամներու ցուցակը, որպէսզի, բնականաբար, անոր հիման վրայ բաժանորդներ ապահովուին թերթին համար:

Տրամաբանօրէն կը հետեւցուի թէ նախապարաստական աշխատանք մը կատարուած էր արդէն թերթին հրատարակութեան համար:

Յիրաւի, դիւանային նիւթերուն մաս կազմող արձանագրութեան մը համաձայն, 29 Ապրիլ 1915ին Գահիրէի մէջ գումարուած նիստի մը ընթացքին, որոշ ազգայիններու ներկայացուած էր Արեւի հրատարակութեան ծրագիրը, եւ ոմանք իրենց ստորագրութիւններով հաւանած էին թերթին հրատարակութիւնը ապահովելու համար բաժնեթուղթի վրայ en commandite ընկերութիւն մը կազմել հարկը բաժնեով, խաբքանչիւրը չորս ոսկիէն»:

Բաժնետէրերու սկզբնական անուանացանկ մը կը շիշատակէ, ի միջի ալլոց, հետեւեալ անունները՝ Լեւոն Մկրտիչեան (26 հաս), ՀԲԸՄ (26), Պօղոս Նուպար (6), Մկրտիչ Անդրանիկեան²⁰ (3), Միհրան Ղազարոսեան²¹ (3), Կարապետ Շէրիտեան²² (2), Ծաղուկ Արթին²³ (2), Ծրուանդ Աղաթօն²⁴ (2), Վահան Մալէզեան²⁵ (1), Տիգրան Հանրիսեան²⁶ (1):

Պահ մը առաւել եւս ետ երթալով, նշենք թէ Անդրանիկեան՝ Պօղոս Նուպարի հասցէազրուած իր 15 Ապրիլի Փրանսատառ թուակիրով կը տեղեկացնէր թէ Արեւ պիտի ըլլայ ՀԲԸՄի օրկանն ու սեփականութիւնը:

Իր 6 Մայիս թուակիրով շնորհաւորիչ ետք արտոնագրին ստացումը, Անդրանիկեան՝ Մկրտիչեանի կը յայտնէ թէ ՀԲԸՄի կողմէ շտուռ ոսկի եամբայ կը հանուր անմիջապէս, եւ կը խնդրէ որ թերթին առաջին թիւէն 500 օրինակ զրկուի Գահիրէ, որպէսզի հատկապէս կազմուած յանձնախումբին կողմէ՝ անյապաղ մեր բաշխուի: Խնդրանք մըն ալ կը փոփառի փոխանցել Քէֆէեանի եւ Միգայէլ Կիւրճեանի, որպէսզի թողուած ուղարկեն ՀԲԸՄի Գահիրէ հրատարակուող պալ-

տոնաթիթ Մխիթան անազրին Աերջազն, կը փափաքի որ Մխիթանի գրաւարագետ Յակոբ Ազապար վերադարձուի Գահիրէ, ենթադրելով որ անոր առաքելութիւնը աւարտած է Ազիզանգրիոյ մէջ: Ազապար Ազիզանգրիոյ զրկուած էր Անդրանիկեանի կողմէ՝ Մկրտիչեանի և Մալխա թուակիր հեռագրին ընդառաջելով:

7 Մալխա 1815ին, Մկրտիչեան կը գրէ Անդրանիկեանի. «Ենտրուակալութեամբ ստացայ Ձեր երէկուան նամակը, նոյնպէս ալ զանազան ցանկերը»:

Այստեղ կամարականները¹⁷ վճարեցին ինծի միայն երեսուն եգիպտ. ոսկի, թէն յետոյ խոստացուած ըլլար: Մուսթաֆա¹⁸ եւ այլ խոստացած են մնացածը ամբողջացնել: Ենտրուակալ եմ որ Բարեգործականէն յետոյ ոսկի կը խրկէք, բայց ինչպէս Մալխեան ինծի հաւաստեց՝ Բաշան¹⁹ ալ քսան ոսկի արձանագրուած էր, ուստի կը յուսամ որ այդ գումարն ալ կը հանիք խրկել յիշեալին հաշուին: Հոս հիմա ամէն բան սգած է, թուղթ, դրաշար, տպագրութիւն: Տամատեանը, որուն զիրիւր կը գործածենք²⁰, ազնուութիւնը ունեցաւ յայտարարելու թէ՛ բան մը չա՛նել չ'ուզի որ զործէն, ալ ծալրը ծալին իր ծախքերովը բաւականանայ, բայց մամուլ չունի, եւ մինչեւ որ մամուլ մը ձեռք ձգենք՝ թերթը տեղական տպարանի մը մէջ պիտի տպենք: Ածանազոյնը մէկ թիւին համար 28-30 դուրուշ ողջ է, այնպէս որ, tout compte fait, ամիսը 30 ոսկիի նուազագոյն ծախք մը ունինք, խմբագիրներու վարձատրութիւնն ալ մէջը ըլլալով: Կ'ըբո՞նէք թէ՛ ձեռքս հասած դրամը առ առաւելն 2 ՆՅ ամուսնու ծախք մը կը ներկայացնէ, ինչ որ չի բաւեր թերթի մը ապագան ապահովելու համար: Եւ ես որ, պարագաներու բերմամբ, անուսն տուի այս գործին, կ'ուզեմ թերթը հաստատ հիմնելու վրայ զննել Եւրոպա միկնելէ առաջ: Ինչպէս դիտէք կամ իմացած էք, Յունիս շին Բաշային ժամ կ'ըրթամ իբրեւ անձնական քարտուղար, զոյգն ծառայութիւն մը մատուցանելու: Ազգիս եւ Ն. Վսեմութեան, եւ այդ թուականին կարենալ միկնելու համար հարկադրուած եմ զիչեւը ցորեկին խառնել եւ առկախ գործերս կարելի եղածին չափ շուտով կարգադրել, ուստի չպիտի փափաքէի թերթին յարատեւութիւնը չապահոված Եւրոպա միկնելի, զի վստահ եմ թէ՛ այս թերթը, մանաւանդ կովկասեան եւ պոլսական հայ թերթերու չգոյութեան, կոչուած է աւազին զեր կատարել Արտասահմանի մէջ եւ վստահ եմ անոր բարոյական յաջողութեան, արուած ըլլալով մանաւանդ թէ՛ անկիս որպիսի բարոյական ործերով տօնուած է:

«...Տպարանական եւ գրաքննչական պատնասներով (զեւ հայ censeur չեն գտած այս տեղ) թերթը պատրաստ կ'ըլլայ Երկուշաբթի իրիկուն... վստահ չեմ թէ՛ հայ գրաքննիչի ընտրութիւնը մ'ըր կ'ընէ կառավարութիւնը...»

«...Վստահ եմ որ անոր պարունակութենէն շատ զուր պիտի մնայ: Ամբողջ հայ մտաւորականութիւնը (բացի անշուշտ Մուրէն Պարթեւեանէն²¹ զոր հայ մտաւորականութեան պոռնկացումը կը նկատեմ աւելի) մեր թերթին շուրջը բոլորուած է...»:

Իր 12 Մալխա թուակիր պատասխան նամակին մէջ, Անդրանիկեան դիտել կուտայ թէ՛ ՀԲԸՄի յատկացումն ու Պողոս Նուպարի անձնական նպատար երաւական չեն Արեւի տնտեսական զիրքը ապահովելու, կը թեկադրէ որ Մկրտիչեան ժամ առաջ զվերջնական ու գործնական ձեւ մը տալով՝ զործադրութեան զնն զբաժնե-

Յուզմբերու վրայ կազմելի ընկերութիւնը, ինչպէս խոստացած էր ընել Գահիրէն մեկնելէ առաջ:

Այս կը տեղեկացնէ թէ ստացած են Արեւի առաջին թիւէն 400 օրինակ ու վաճառած անկէ 350ր: Ծնոր տնօրինութիւն, Արեւի յատուկ ամէն հաշիւ կ'արձանագրուի ՀԲԸՄի կեդրոնի գիտնական Քոմիսս Գարապաշեանի միջոցաւ: Կ'աւելցնէ թէ Արեւի Մագմանեան անուն ճեմնակաւ անձը պատասխանատու պիտի ըլլայ առաքուած բոլոր թերթերուն եւ պիտի փորձէ դանել բաժանորդներ եւ ծանուցումներ, որոնց հասցիքին տասը տոկոսը պիտի յատկացուի իրեն, իր ստացած ամսականէն բացի:

Վերջապէս, Անդրանիկեան կը յայտնէ թէ շառաւիղի թիւը լաւ ընդունելութիւն գտած է՝ եւ կը հազորդէ թէ դրաշար Յարէթ արդէն Գահիրէն ճամբայ ելած է դէպի Ազեքսանդրիա՝ պատակար ըլլալու համար թերթին: Տեղին է նշել թէ Յարէթի պայմաններուն ընդունելի ըլլալը հաստատող 13 Մայիս թուակիր հեռագիր մը ուղղուած էր ՀԲԸՄի կեդրոն՝ Քէֆէանի կողմէ:

13 Մայիս 1915 թուակիրին մէջ, Մկրտիչեան կը հազորդէ Անդրանիկեանի ՎՄԻՆԵ. Երկուշաբթի կը հասցնիմ Ձեզ ՎԱրեւի բաժնետեարց կանոնագիրը եւ այս կերպով կարելի կ'ըլլայ լուրջ զորքի մեծարկելը:

Աւելցնելէ ետք թէ թերթին հրատարակութիւնը տուեալ շաբթուան ընթացքին անկանոն եղած է զգրաշարի պակասութեան պատճառով, Մկրտիչեան կ'ընդգծէ. «Թերթիս ալտեղի գրաքննիչը Դաշնակցական ենթակոմիտէի անդամ է... Մենք կիրճեանը առաջարկեցինք, թաց կ'երեւայ թէ միտք արդէն Մուհամադան (Նահանգատուճը. Վ.Ղ.) հայերէնի թարգմանութիւն կ'ընէ եղեր, ուստի դանի նախամեծար սեպեցին: Անոյնացի գրաքննիչին հասկցուցինք թէ անիկա բարթի մարդ է, թաց մեզի ապահովուց որ բոլորովին չէզոք պիտի մնայ եւ իր կողմէն հայ գրաքննիչն ալ հաւատաց թէ Դաշնակցութեան պիտի քաշուի, չի կրնար երկու տէրանց ծառայել. ալ տեսնեք, զորքը ցոյց պիտի տայ»:

Յոյս յայտնելէ ետք թէ երրորդ թիւը կ'ակնկալուի Երկուշաբթի հասցնել, Վեթէն 12 կիրակի, Մկրտիչեան կը գրէ. «Քէֆէանը հազիւ կը հասնի կոր Արեւին, իսկ կիրճեանը բան մը պատրաստելու վրայ է...»:

Իր շտապ գրութեան մէջ նամակազիրը կ'աւելցնէ. «Թերթին մանր մունր թերթիւնները հետզհետէ կ'անհետանան եւ տակաւ աւելի ետիս պարունակութեամբ ի յոյս կ'ընծարուի»:

5 Յունիս 1915ին, Մկրտիչեան կը գրէ Անդրանիկեանի. «Ընթացիկ կը լռիմ Արեւի Հրատարակչական Ընկերութեան կանոնագիրը իմ կողմէս ստորագրուած»:

«Յօդուած մը աւելցնելու պէտք կայ անվար մնացած բաժնեկազմերուն համար զոր խորագրեցի եւ ներփակ կը լռիմ: Կարելի է թերեւս իրրեւ article additionnel գնել եւ դուք իմ կողմէս փոխանորդարար ստորագրել»:

«Արդէն ինչպէս կը տեսնեք՝ Արեւի բաժնեկազմերն ալ դուք պիտի հանդէս ստորագրել փոխանորդարար, որովհետեւ օրս չի մնաց եւ քանի մեկնումս կը մտանայ՝ աչքան զորքերս կը շատան»:

«Ներքակ կը գտնէք նաեւ Արծիթուղթերուն մէկ օրինակը զոր ա՛յ այրտեղ տակի կու տայք, նոյնպէս ներքակ է բաժնետեւարց յանձնառարին պատնէնը»:

Ահաւասիկ եւ առաջարկուած թղթածը:

«Յօդ... Եթէ բաժնետեւարց դրամադուրի կոչին սեւէ մասնավճարը մերծն վճարն՝ իրենց ազգարարութիւն կը խրկուի յանձնարարեալ նամակով:

«Ու եթէ յանձնարարեալ նամակին առաքման թուականէն մինչեւ մէկ ամիս դարձեալ չի վճարեն՝ այդ պարագային իրենց մինչեւ այդ թուականը ըրած բոլոր նախորդ վճարումներուն վրայ ամէն իրաւունք կը կորսնցունեն եւ իրենց բաժնեթուղթերը կը բնութիւն ի նպաստ եւ թողուտ Հրատարակական Ընկերութեան»:

Կցեալ մեքենազիր կանոնադրին ներքեւ կը գտնենք ստորագրութիւնները Տօքթ. Գ. Սերոբեանի²⁶, Կ. Շէրիտեանի, Մ. Անդրանիկեանի, Մ. Ղազարսեանի, Լ. Մկրտիչեանի (լատինատառ) եւ Յ. Տիրատուրի²⁷:

Անդրանիկեանի՝ Մկրտիչեանին ուղղած Յ Յունիս թուակիրէն ի յայտ կու գայ թէ այս մեքենազիր կանոնադրը, ստորագրուած Շէրիտեանի, Ղազարսեանի, Սերոբեանի եւ Տիրատուրի կողմէ (Թերեւս նաեւ Անդրանիկեանի), վերաճակուած է նախորդի մը հիմքին վրայ, որովհետեւ կ'ըսուի «Հարկ տեսանց զկանոնադրի փոփոխումն անուսով թողուած մը եւս աւելցնել, որուն եթէ Համաձայն էք, ինչպէս կը կարծենք, կը Հանրք առաջին առթիւ մեզի զրկել բաժնեթուղթերը, որպէսզի տեղաւորենք»:

Նոյն նամակի աւարտին, Անդրանիկեան կը տեղեկացնէ թէ ըստ Վահան Մալէզեանի, Փօղոս Նուպար աշխատանքի թուած է թերթին ծանուցումներ ապահովելու նպատակով:

Հարկ է դիտել տալ թէ մեքենազիր օրինակին ստորագրութիւնները կը պարզեն նոյն շարքով այն նոյն անունները, որոնք կը գտնուին Հրատարակեալ կանոնադրի աւարտին, բացի Մալէզեանէն, որ յաւելում մըն է տպագիր օրինակին մէջ:

Ինն էջերէ բաղկացած մեքենազիր կանոնադրին բաղդատումով տպագիր օրինակին Հետ, ի յայտ կու գայ մէկ տարբերութիւն - տպագիր կանոնադրին Յօդ. 25ն կը ճշդէ թէ սովորական նիտանը կը կայանան Մալիս եւ Նոյեմբեր ամիսներուն: Մեքենազիր օրինակը (թղ. 21) իբրեւ լրացումի բաց էր թողած ամիսներու միջատակումը:

Յօդուած 4էն սկսեալ տպագիր եւ մեքենազիր կանոնադրերու թղթածներու թիւերուն մէկ թուանշանով անճամպատասխանութիւնը հետեւանք է այն իրողութեան, որ Մկրտիչեանի վերը առաջարկած թղթածը ներմուծուած է տպագիր օրինակին մէջ նոյնութեամբ, իբրեւ Յօդուած 4:

Մկրտիչեան Յունիս 5 թուակիր այլ նամակով մը Անդրանիկեանը լրացոր փոխանորդ կը կարգէ թերթին բոլոր գործառնութեանց, միաժամանակ ներքակելով Արեւի բաժանորդներու ցուցակը, որուն բնագիրը չէ պահպանուած դիւանային թղթածարարին մէջ:

5 Յունիս 1915 թուակիր նամակով մը՝ Գահիրէէն ուղղուած Մկրտիչեանի, ՀԲԸՄի զիւանապետ Գարազաշեան կը տեղեկացնէ թէ ստացած են Մկրտիչեանի 3 Յունիս թուակիր նամակը եւ անոր կցեալ զբաժնետեւարց կանոնադիրը, աւելցնելով թէ «Կ. Շէրիտեանն զէջ կը խորհի անմիջապէս տպագրել տալ Հոս 100 օրինակ այդ կանոնադրէն եւ մէյմէկ օրինակ յանձնել բաժնետէրերուն, միանգա-

մայն Կառայնցնեղոյ իբրև ընկալազիր՝ առաջին իրենց մասնագնարնեղուն Համար Եթէ Համաձայն էք՝ Հանկեք անմիջապէս երկտողոյ մը Հաղորդելով Ծանուցանել միանգամայն եթէ այդ առթիւ թերազրութիւն մը ունիք»:

Նամակազիրը կ'աւելցնէ. «Ե. Նէրիդեան (Քաթուշ) Արեւաշի Համար պաշտօնի կոչուեցաւ (ձ) չորս ոսկի ամսականով երէկուրնէ սկսեալ եւ այս առաւօտ թ. 12 Արեւաշի քրտար ինք առաւ կայարանէն: Աւերորդ է ըսել թէ ... վերջ կը գտնէ նախորդին, Տ. Գրիգոր Գարագաշեանի պաշտօնը»:

Յ Յունիս թուակիրով, որ կը թուի թէ Արեւի կապակցութեամբ զբուսած Սիւրբիանի վերջին նամակն է Աղեքսանդրիայէն Եւրոպա ուղևորուելէ առաջ, Անդրանիկեանէն կը խնդրուի տեսեսական եւ Հաշուական բոլոր թղթակցութիւններն ու գրամները չլիջ Տամատեանին, իսկ խմբագրական ընդթի թղթակցութիւնները ուղղել Քէջէեանին:

Ար նամակին մէջ Սիւրբիան կը խօսի Քիւրքեանի (Հաւանարար՝ Վահան) թղթակցութիւններուն մասին եւ կ'ըսէ. «... ոչինչ նոր քան կայ քաղաւելիք: Իսկ ինչ ինչ գաղափարներ, օրինակ զգաշնակցականաց չես միանալու քրազիրը պարզապէս աւարտիմակ զաղափար մը կու տան իր մտայնութեան մասին: Մէյ մը, առանց ժամանակին Հազին, քաղաքական կացութիւնը լրբունելու թունդ պահպանողական կ'ըլլան եւ Բաշային խոհեմազարդ Հեռագիրներ կը գարնեն եւ միտ կողմէն քաւական ճկունութիւն չեն ունենար Բաշային բոլորովին Համակիր Հատուածներուն չես Համաձայնելու, անոնց bonne foi-ն միշտ իսկ կասկածի տակ կը գնեն եւ Բաշային եւ իր գործին ամէնէն մեծ թշնամիներուն չես զործակցելու խթորիստ քրազիրներ կը մշակեն»:

Յ Յունիս 1915 թուակիր «Զեկուցք» մը բաժնետէրերուն պաշտօնապէս կը Հազորդէ թէ բաժնեթուղթերու վկայազիրներ պատրաստ են եւ զբոս Հիմնական կառնոնազրի, առաջին վճարումը անդի պիտի ունենայ անմիջապէս 1 Եգ. ոսկի, իւրաքանչիւր բաժնեթուղթի Համար»:

Զեկուցքը կը կրէ կ'ըսի կ'իկր Արեւի Հրատարակչական Ընկերութեան՝ իբրև The "Arev" Publishing Co.-L. Meguerditchian & Co. Սիւրբիանի վերջին նամակը՝ Արեւի իբրև արտօնատէր իր դերակատարութեան մասին, կը կրէ 20 Սեպտեմբեր 1915 թուականը: Հրատարակչը մըն է ան եւ արտօնատիրութիւնը փոխանցելու արժազրութեան մը Հաստատումը՝ ուղղուած ՀԲԸՄի Կեդրոնական վարչութեան: Հոն կ'ըսուի. «Ընթացական միջոցներս անբաւական ըլլալով նորանոր նրխական զոհողութիւններ ընել Արեւին Հրատարակութեան Համար - միշտ Հիմա այդ թերթը իննի անձնապէս աւելի քան 300 ոսկիի ապրանք եղաւ - որոշած եմ զայն զազրեցնել Նոյեմբերի վերջ»:

«Հետեւաբար կը խնդրեմ որ արժէն իսկ զբաղուիք թերթին փոխանցման գործողութիւններով»:

ԿԱՐԳ ՄԸ ՆՇՈՒՄՆԵՐ

Ապոյանեան գիտել կու տար թէ թերթը «միանգամայն բերանը պիտի ըլլար Եգիպտոսի պարտուալթին, Հ.Բ.Ը.Մրութեան եւ բոլոր անկուսակցականներուն», եւ ան երեւան եկաւ ոչ իբրև կուսակցական թերթ, այլ՝ պաշտօնաթերթ ազգային շահերու»:

Թերթին առաջին խմբագրապետը՝ Վահան Թէքէեան, իր յուշերուն մէջ Հասարակական Ազգայնականի նոյն տեղեկութիւնը, կը նշէ. «Սահմ. Ռամկավար կուսակցութեան սկզբունքներն եւ ուղղութիւնն է՝ որ պիտի պաշտպանուին անոր մէջ, Պատուիրակութեան եւ Բարեգործականի նախագահը Համաձայն է այդ մասին, ան ուզած է միայն՝ որ ի փոխարէն Թերթը ուժ տայ Ազգ. շահերու պաշտպանութեան Համարը իր բացած Հանդանակութեան եւ անշուշտ նաեւ՝ Բարեգործականին»²⁵.

Երբ նկատի կ'ունենանք յատկապէս ներքոնշեալ կանոնադրին ուղղութեան կանոնադրութիւնները, անոնց յոյսով նոր մեկնաբանութեան կ'արժանանան Թէքէեանի առաջին խմբագրականէն որոշ արտայայտութիւններ. օրինակ, կըր կ'ըսէ. «...ԱՐԾԻ քաղաքական կուսակցութեան մը օրկանը չէ...», կամ՝ «ազգային շահերու նուիրուած օրկան մը պիտի ըլլայ՝ ասոնք ուղղակի արձագանգն են Յօդ. 12ի տրամադրութիւններուն»²⁶.

Ասոնց կողքին, սակայն, Թէքէեան, իրեն յատուկ մտաւորական պարկիշտութեամբ, յատուկ ընկէ ետք թէ Թերթին ուղղութիւնը Հետեւողական պիտի ըլլայ իր անցեալին պարզած ուղղութեան եւ սկզբունքներուն, կը շեշտէ. «Անձնաւորութիւններու խօսքը ընկելով՝ Հա՛րկ է որ ըսնեք այստեղ թէ մենք ունեցած չենք եւ ԱՐԾԻն այլ պիտի չունենայ ընկերական եւ նիւթական աւելի կամ նուազ շողշողուն գիրքերուն՝ ուսմիկներու կամ շահախնդիր նկարագիրներու վրայ ներգործած չլացումը: Մենք չենք յարգելու ու կ'ուզենք որ ժողովուրդն այլ չարդէ նիւթական ու ընկերական գիրքը երբ անոր չեն միանար մտքի եւ սրտի յատկութիւններ, եւ մենք չենք ծոխր բոլոր այս յատկութիւնները ունեցող ամենաբարձր անձնաւորութեան մըն այլ առջեւ՝ երբ ան զանոնք ի սպաս չի զներ, պէտք եղած պահուն, իր ազգին ու իր Հայրենիքին»:

Պէտք է զիտել տայ թէ Արեւով ռամկավար լրագրութեան մէջ սկզբնաւորուեցաւ Բարեգործականի Հետ ձեռք ձեռքի ընթանալու սովորութիւն մը, որ մեր ազգային իրավիճակներու յայն պատկերին վրայ ընդհանուր առմամբ ունեցաւ իր բարերար ազդեցութիւնը: Սակայն միշտ չէ որ ազգային շահերը բարեկամութիւններէ անխտող սահմանադիրները յատուկ մտաջին, եւ պատահեցաւ որ Թէքէեանի մատնանշած «չլացումը» երբեմն առաջնորդէ անբաղձալի կացութիւններու:

ԿԱՆՈՆԱԳԻՐ²⁷
«ԱՐԵՎ»Ի ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
(ԼԵՒՈՆ ՄՎՐՏԻՉԵԱՆ ԵՒ ԸՆԿ.)
THE AREV PUBLISHING COMPANY
(L. MEGUERDITCHIAN & Co.)
ՀՆՍՆՈՒԱՑ
1915ԻՆ
ԳԱՀԻՐԷ

ԿԱՆՈՆԱԳԻՐ
«ԱՐԵՎ»Ի ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
Ա.
ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆ-ԴՐԱՄԱԳԼՈՒՄ-ՓՈՒՆԱՆՑՈՒՄ-ՍԵՊԷԼԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ-
ՈՒՂՆՈՒԹՅՈՒՆ

Յօդ. 1- Ներկայիս Աղեքսանդրիա հրատարակուող «Արև» հայերենի գո-
յությունը և յառաջդիմությունը ապահովելու նպատակով Ընկերություն մը կազ-
մուած է, որուն առետրակամ անունն է՝

«ԱՐԵՎ»Ի ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
(ԼԵՒՈՆ ՄՎՐՏԻՉԵԱՆ ԵՒ ԸՆԿ.)
THE AREV PUBLISHING COMPANY
(L. MEGUERDITCHIAN & Co.)

Ասիկա բաժնեւորներով օժանդակուած ընկերութիւն մըն է. (Société en
Commandité par action) իրն պատասխանատու-վարիչ (gérant-responsable) ու-
նենալով բերքին արտօնատէրը Տիար Լ. Մկրտիչեան:

Յօդ. 2- Ընկերութեան դրամազույժն է 500 Ե.Ո., (հինգ հարիւր եգիպտ. ոս-
կի) որ կը բաղկանայ հասը չորս եգիպտ. ոսկինոց հարիւր քսան եւ հինգ բաժ-
նեւորներէ:

Յօդ. 3- Ընկերութեան Պատասխանատու-վարիչը իրեն դրամազույժս կը
բերէ գործին մէջ՝ բերքին արտօնագրին շահագործումը եւ իր Աշխատութիւնը՝ ո-
րոնց փոխարէն կը ստանայ քսան եւ հինգ չորս ոսկինոց՝ Համազումար հարիւր
ոսկիի արժեւորութիւնը, իսկ մնացեալ հարիւր հասը չորս ոսկինոց, համազումար չորս
հարիւր ոսկիի արժեւորութեան հրապարակ կը հանուին, որոնց հարիւրին քսան
եւ հինգը կանխիկ՝ իսկ մնացեալ եօթանասուն եւ հինգը, երեք հաւասար չափով,
երեք ամիսէ երեք ամիս վճարելի են:

Յօդ. 4- Եթէ բաժնետեւարը դրամազույժի կոչին ոնէ մասնավճարը մերժեն
վճարել իրենց ազդարարութիւն կը խրկուի յանձնարարեալ նամակով:

Ու եթէ յանձնարարեալ նամակին առաքման քուակամը մինչեւ մէկ ամիս
դարձեալ չի վճարեն՝ այդ պարագային իրենց մինչեւ այդ քուակամը ջրած թուր
նախորդ վճարումներուն վրայ ամէն իրաւունք կը կորսնցունեն եւ իրենց բաժնե-
րուրիւրը կը մնան ի նպաստ եւ յօգուտ Հրատարակչական Ընկերութեան:

Յօդ. 5- Ընկերութեան Կեդրոնատեղին է թիւ 5, Սքամպուլ փողոց, Աղեք-
սանդրիա:

Յօդ. 6- Որքան ալ օրինական եւ այլ պատճառներով ԱՐԵԻ քերթին արտօնաբերուող Տիար Լեւոն Մկրտիչեանի անունով առնուած է՝ բայց եւ այնպէս քերթին իրական սեփականատէրն է եզիպտոսի ՀԱՅԿ. ԲԱՐԵԳՈՐԾ. ԸՆԴՀ. Միութիւնը, ինչպէս արդէն նոյնը գրատրուապէս յայտարարած է տիար Մկրտիչեան՝ Միութեան նախագահ Վսեմ. Պօղոս Փաշա Նուպարին:

Ճիշտ միեւնոյն պատճառներով, կանոնագրիս 3-րդ յօդուածին տրամադրութեան համաձայն Տիար Լեւոն Մկրտիչեանի յատկացուելիք չորս ոսկինոց քսան եւ հինգ արծեթադրերն եւս էականօրէն Հայկ. Բարեգործ. Ընդհ. Միութեան կը պատկանին, իրենց շահարաժիճներով:

Յօդ. 7- Ընկերութեան բաժնեւորները անուանակիր (nominati) են, եւ այն ատեն միայն կրնան ուրիշին փոխանցուիլ՝ երբ անկաւ Ընկերութեան վարչական կեդրոնատեղիին մէջ գրատր յանձնառութիւն տայ ներկայ կանոնագրիս բոլոր տրամադրութիւններն անպայման եւ անպատրուակ ընդունիլ:

Յօդ. 8- Բացի Պատասխանատու-Վարիչէն՝ որ իր անունը Ընկերութեան տուած ըլլալուն համար (associé en nom collectif) հրապարակին հանդէպ Ընկերութեան բոլոր պարտքերուն եւ վնասներուն անձնապէս պատասխանատու է՝ միւս բոլոր բաժնետէրերը սոսկ իրենց գնած բաժնեւորութիւնն ամբողջական վճարումին միայն պատասխանատու են եւ ուրիշ ոեւէ յանձնառութիւն չեն ստանձնելու հրապարակին կամ Ընկերութեան հանդէպ:

Յօդ. 9- «Արեւ» քերթը պիտի ըլլայ Հայկ. Բարեգ. Ընդհ. Միութեան կէսպաշտօնական օրկանը եւ իր այս հանգամանքով պարտատուր է Միութեան նիւթական եւ քարոյական շահերը ամէն բանատուր միջոցներով պաշտպանել:

Անկաւ չի կրնար իր էջերուն մէջ հիւրընկալել քննադատական յօդուածներ Միութեան կեանքին ու գործին դէմ, այլ առ առատելն քարեացական եւ օգտակար թելադրութիւններ ներկայացնել՝ Միութեան կանոնագրի հիմնական տրամադրութեանց եւ ոգոյն ներած սահմանին մէջ:

«Արեւ» օրկանը պիտի ըլլայ նաեւ՝ Վսեմ. Պօղոս Նուպար Փաշայի հայրենասիրական առաքելութեան:

Իսկ «Արեւ»ի ընդհանուր նպատակը եւ ուղղութիւնը պիտի ըլլայ՝ իր կարողութեան սահմանին մէջ հայ ժողովուրդի քարոյական նկարագիրը շինել եւ ամուր մտատրական պաշարը ճոխացնել:

Անկաւ անձնական կիրքի եւ նեղ կուսակցական պայքարի թերթ մը չպիտի ըլլայ թեւ, բայց իրեն պարտք պիտի սեպէ հարուածել աղտոտ քարքերը եւ ազգավնաս գործունէութիւնները երկրին պատերազմական օրէնքներուն ներած սահմանին մէջ եւ ծանրախոտ ոճով:

Բ.

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՎԱՐԻՇՈՒՆ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԵՒ ՆԻԹԱԿԱՆ
ԻՐԱՎԱՍՈՒԹԻՒՆՆԵՐՆ ԵՒ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ – ԻՐ ՅԱՆՉԱՌՈՒԹԻՒՆՆԵՐՆ ՈՒ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Յօդ. 10- Արեւ քերթին քարոյական պատասխանատուութիւնը արտօնատէրին կը վերաբերի, ուստի եւ ինք կ'ընտրէ քերթին խմբագրապետը եւ աշխատա-

կիցները եւ իրեն կը վերապահէ թերթին մէջ երեւնալիք նիւթերու ընտրութիւնը եւն. քայց կարող է իր այս իրաւատութիւնները մասամբ կամ ամբողջովին իր յարմար դատած անձին կամ անձներուն փոխանցել իր անձնական պատասխանատուութեան ներքեւ:

Յօդ. 11- Արտօնատէրը պարտի թերթին հանգամանքներուն եւ ընդհանուր ուղղութեան մասին կանոնագրիս 8-րդ յօդուածին տրամադրութիւններն յարգել եւ գործադրել:

Երբ, առանց իր պարկեշտութիւնը կասկածի տակ ըլլալու, արտօնատէրը կը տեսնէ որ խնրագրական մարմինը կամ տգիտաբար կամ իր վստահութիւնը չարաչար գործածելով թերթին ուղղութեան հակառակ շարժած է՝ պարտատէր է անմիջական միջոցները ձեռք առնել որպէսզի գործուած սխալը կամ զեղծումը կրկին անգամ տեղի չունենայ:

Իսկ երբ ինքը կամովին վերոյիշեալ 8-րդ յօդուածին տրամադրութեանց հակառակ շարժի՝ եւ կամ հակառակ շարժողները ի կարգ չի կրնալ հրահրելով հանդերձ յամառի իրրեւ արտօնատէր մնալ, այդ պարագային ամբաստանութեան կ'ենթարկուի Բաժնետեարց Արտաքոյ Կարգի Ընդհ. Ժողովէն եւ ամբաստանութիւնը հաստատուելու պարագային՝ անմիջապէս կը դադարեցուի իր Պատասխանատու-Վարիչի հանգամանքէն ու պաշտօնէն եւ ընկերութիւնը կը շարունակուի իրեն յաջորդող Պատասխանատու-Վարիչին անունով, մոյնը հասարակութեան ծանուցուելով յատուկ շրջաբերակաւով:

Արտօնատէրը այժմէն կ'ընդունի որ պարտատէր է, այդ պարագային, առանց օրինական հետապնդումի տեղի ձգելու, Ընկերութեան ամբողջ գոյքերը փոխանցել Ընդհ. Ժողովոյ կողմէ նշանակուած Մարմնոյն կամ անձին, իսկ «Արեւ»ի արտօնագիրն ալ փոխանցել Հայկ. Բարեգործ. Ընդհ. Միութեան եւ կամ այս վերջնոյն կողմէ նշանակուելիք անձին:

Յօդ. 12- «Արեւ»ի արտօնատէրը ինք կը ստանձնէ թերթին նիւթական մատակարարութեան ընդհանուր հոգը, քայց կրնայ իր այս իրաւունքը մասամբ կամ ամբողջութեամբ իր յարմար դատած անձին կամ անձներուն փոխանցել իր անձնական պատասխանատուութեան տակ:

Այս մասին քացատրիւն կը կազմէ միայն Գահիրէն, ուր ձեռքէ վաճառուած թերթերու, քաժամորդագրութեանց եւ ծանուցումներու գանձումներու հոգը եւ պատասխանատուութիւնը Բարեգ. Ընդհ. Միութիւնը կը ստանձնէ:

Ոչ յիշեալ Միութիւնը ոչ ալ Արտօնատէրը պատասխանատու չեն անվճար մնացած քաժամորդագրութեանց մասին, քայց միւրապէս պատասխանատու են իրենց կողմէ նշանակուած գործակալներուն նիւթական զեղծումներուն նկատմամբ:

Արտօնատէրը պարտատէր է կանոնաւոր հաշուետումար ունենալ իր բոլոր գործառնութեանց մասին եւ վեց ամիսը անգամ մը իր համարատուութիւնը եւ հաշուեկշիռը ներկայացնել Ընդհ. Ժողովին, հանդերձ յարակից արդարացուցիչ բուլթերով:

Յօդ. 13- Երբ գանձուած չորս հարիւր ոսկի դրամագումարին երեք չորրորդը սպառի եւ թերթը իր միջոցներով շարունակել կարելի չըլլայ՝ Պատասխանատու-Վարիչը պարտատէր է Ընդհ. Ժողովը ի նիստ հրահրել Դիւանին հետ խորհրդակցարար եւ կացութիւնը պարզել:

Այդ պարագային կամ այն է որ դրամագույրը կ'առնեցուի եւ կամ կ'որոշուի բերրին հրատարակութիւնը դադրեցնել:

Եթէ բերրին հրատարակութիւնը դադրեցնել որոշուի՝ այն ատեն Ընդհ. Ժողովը իր կողմէն նշանակուած Յանձնախումբի մը ձեռամբ Ընկերութեան քողոր գոյքերը իր յարմար դատած եղանակաւ ի վաճառ կը հանն եւ Ընկերութեան քողոր պարտքերը վճարելէ յետոյ մնացածը համեմատաբար կը բաժնէ բաժնետէսարց միջեւ:

Իսկ Պատասխանատու-Վարիչը «Արեւ»ի արտօնագիրը կը փոխանցէ Հայկ. Բարեգ. Ընդհ. Միութեան կամ այս վերջնոյն կողմէ նշանակուած անձին անունին:

Յօդ. 14- Երբ Պատասխանատու-Վարիչը դրամական զեղծում գործելու ըլլայ՝ անբաստանութեան տակ կ'առնուի Ընդհ. Ժողովէն եւ յանցանքը հաստատուելէն յետոյ կ'արտաքսուի:

Այդ պարագային պարտի, առանց դատական հետապնդումի պէտք ձգելու զեղծումի գումարը Ընկերութեան հատուցանել եւ անմիջապէս Ընդհ. Ժողովին կամ այս վերջինին կողմէ նշանակուած մարմնոյն կամ անձին յանձնել ընկերութեան քողոր գոյքերը:

Ընկերութիւնը կը շարունակուի նոր Պատասխանատու-Վարիչին անունով եւ նոյնը կը ծանուցուի հասարակութեան՝ յատուկ շրջափերականով:

Իսկ արտաքսուած Պատասխանատու-Վարիչը պարտի անմիջապէս «Արեւ»ի արտօնագիրը փոխանցել Հայկ. Բարեգործ. Ընդհ. Միութեան կամ այս վերջնոյն կողմէ նշանակուած անձին անուանը:

4.

ՀԱԿԻՉ ՅԱՆՉՆԱԺՈՂՈՎ

Յօդ. 15- Ընդհանուր Ժողովը կ'ընտրէ երեքէն հինգ անձէ բաղկացեալ Հսկիչ Յանձնաժողով մը:

Յօդ. 16- Հսկիչ Յանձնաժողովը կ'ընտրուի բաժնետէսարց մէջէն, բայց անոր անդամները կրնան, իրենց անձնական պատասխանատութեան տակ, բաժնետէր չեղող անձեր իրենց կողմէ փոխանդող կարգել:

Յօդ. 17- Հսկիչ Յանձնաժողովին պաշտօնն է Ընկերութեան տուժարները եւ հաշուոց արդարացուցիչ քուղքերը պարբերաբար քննել եւ Պատասխանատու-Վարիչին հետ խորհրդակցաբար եւ այս վերջնոյն հաւանութեամբ Ընկերութեան նիւթական բարօրութեանը եւ յատաջղիմութեանը աշխատել եւ հսկել որ արտօնատէրը Կանոնագրիս 12-րդ յօդուածի տրամադրութիւնը գործադրէ, հակառակ պարագային տեղեկագրել անմիջապէս Ընկերութեան Մայր Դիւանին թէ վերոյիշեալ յօդուածը չէ գործադրուած: Հսկիչ դարձեալ որ դրամական զեղծում չի պատահի, եւ պատահելու պարագային՝ փութալ տեղեկագրել Ընդհ. Ժողովոյ Դիւանին:

Յօդ. 18- Հսկիչ Մարմնին պաշտօնը մէկ տարի է, բայց անդամները վերընտրելի են:

Դ.
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

Յօդ. 19- Ընդհ. Ժողովը կը բաղկանայ բոլոր բաժնետերերու ժողովն: Ամեն մի բաժնետեր, նոյնիսկ եթէ մէկ հատ բաժնեթուղթ ունենայ, իրաւունք ունի ժողովի նիստերուն մասնակցելու:

Յօդ. 20- Իրաքանչիւր բաժնետեր այնչափ ձայն ունի որչափ բաժնեթուղթ:

Յօդ. 21- Ընդհ. Ժողովոյ նիստերը երկուրի կը բաժնուին, այսինքն սովորական նիստեր (Assemblée Générale Ordinaire) եւ արտաքոյ կարգի նիստեր:

Յօդ. 22- Սովորական նիստերը կը գումարուին տարին երկու անգամ, վեց ամիսէ վեց ամիս, այսինքն Մայիս եւ Նոյեմբեր ամիսներուն մէջ:

Յօդ. 23- Սովորական նիստերը օրինաւոր են երբ Ընդհանուր Դրամագլուխին գոնէ կէսը ներկայացուած է:

Յօդ. 24- Երբ առաջին հրատեղով օրինական մեծամասնութիւն չի գոյանայ, երկրորդ հրատեղով ժողովը մինչեւ տասն եւ հինգ օր կրկին ի նիստ կը գումարի եւ այս անգամ օրինաւոր կը հռչակուի՝ ինչեւ ալ ըլլայ ներկայացուած դրամագլուխին քանակը:

Յօդ. 25- Սովորական նիստերու մէջ որոշումները կը տրուին ձայներու պարզ մեծամասնութեամբ:

Յօդ. 26- Սովորական նիստերու մէջ Ընդհ. Ժողովոյ պաշտօնն է Պատասխանատու-Վարիչին հաշիւները քննել եւ վաւերացնել, քերթին նիւթական յառաջդիմութեան համար օգտակար առաջարկներ լսել եւ այս մասին ի հարկին որոշումներ տալ, եւ Հսկիչ Մարմնոյն անդամները ընտրել, շահարածիները եւ պահեստի գումարը որոշել եւ այլն:

Յօդ. 27- Արտաքոյ կարգի նիստերը տեղի կ'ունենան ամէն անգամ որ հարկը ներկայանայ:

Յօդ. 28- Արտաքոյ կարգի նիստերը կը գումարուին կա՛մ Դիւանին նախաձեռնութեամբ կա՛մ Պատասխանատու-Վարիչին քեկտորանքով եւ կա՛մ Դրամագլխի առնուազն մէկ քառորդը ներկայացնող բաժնետերերու Դիւանին ըրած դիմումին վրայ:

Յօդ. 29- Արտաքոյ կարգի նիստերը այն ժամանակ միայն օրինաւոր են երբ կը ներկայացնեն ընդհանուր Դրամագլուխին, այսինքն եզիւտական հինգ հարիւր ոսկիին առ նուազն 60%ը:

Յօդ. 30- Արտաքոյ կարգի նիստերու մէջ Ընդհ. Ժողովին պաշտօնն է Կանոնագրիս 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ եւ 33-րդ յօդուածներու տրամադրութեանց համեմատ որոշումներ առնել:

Յօդ. 31- Արտաքոյ կարգի նիստերու մէջ որոշումները կը տրուին ձայներու պարզ մեծամասնութեամբ:

Յօդ. 32- Ընդհ. Ժողովոյ սովորական թէ արտաքոյ կարգի նիստերու օրը եւ ժամը պէտք է ծանուցուին յատուկ շրջաբերական նամակներով եւ երեք անգամ ալ Արեւի մէջ, գումարման քուականէն առնուազն տասնեւհինգ օր առաջ:

Յօդ. 33- Ժողովականը պէտք է ապացուցանեն իրենց բաժնետեր ըլլալը եւ բաժնեթուղթերուն քանակը, կա՛մ բաժնեթուղթերը ներկայացնելով Ժողովին եւ

կա՛ն վկայագիր մը բերելով Պատասխանատու-Վարիչէն, ըստ արձանագրութեան տումարի:

Ե.

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆԱԺԱՄԸ ԵՒ ԼՈՒՅՈՒՄ

Յօդ. 34- Ընկերութեան պայմանագրի երեք տարի է, սկսեալ 1915 Մայիս 10էն մինչեւ 1918 Մայիս 9:

Յօդ. 35- Երբ Ընկերութիւնը դրամագլխի անբաւականութեան հետեանքով ժամանակէն առաջ լուծուած չըլլայ՝ Դիւանը օրինական պայմանագրի պայմաններէն առ նուազն երեք ամիս առաջ Ընդհ. Ժողովը արտաքոյ կարգի միտի կը հրահարի:

Ժողովոյ որոշման համաձայն կա՛ն Ընկերութեան պայմանագրի կը վերանորոգուի ուրիշ երեք տարուան համար եւ կա՛ն Ընկերութիւնը կը լուծուի:

Այս վերջին պարագային Ընդհ. Ժողովը կ'որոշէ Ընկերութեան գոյքերը վաճառելու եղանակը:

Վաճառման արդիւնքը, պարտքերը վճարուելէ վերջ, համեմատաբար կը քաժմուի քաժմեւեւարց միջոց:

Իսկ «Արեւ» բերքին արտօնագիրը Պատասխանատու-Վարիչին կողմէ կը յանձնուի Հայկ. Բարեգործ. Ընդհ. Միութեան կամ այս վերջնոյն կողմէ նշանակուած անձին անունին:

ԿԱՆՈՆԱԳՐԻ ԲԱՐԵՓՈՆՈՒՄ

Առաջին եռամսայ շրջանին մէջ, եթէ ռեւէ բարեփոխման պէտքը տեսնուի, այդ բարեփոխումը կրնայ որոշուիլ Ընդհանուր Ժողովոյ մը մէջ ներկայացուած 60% ձայներու մեծամասնութեամբ (այսինքն 300 ձայնով):

ՀԻՄՆԱԳԻՐ ԱՂԿԱՄՆԵՐ
ՏՕՋԹ. Պ. ՍԵՐՈՎԱԲԵԱՆ Կ. ՇԵՐԻՏՏԵԱՆ ՊԷՅ Մ. ԱՆԴՐԱՆԻԿԵԱՆ
Մ. ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Լ. ՄԿՐՏԻՉԵԱՆ Յ. ՏԻՐԱՏՈՒՐ
Վ. ՄԱԼԷՉԵԱՆ

ՄԱՆՔԱՅԻՆՈՒԹԻՒՆՆԵՐ

- ¹ *Սրբուանց Օսեան (1899-1928), Կրթիւնագիր, Խմբագիր եւ Հրատարակիչ*
- ² *Վահան Թէքեան (1878-1946), քանաստեղծ, կրթական եւ Հասարակական գործիչ, Խմբագիր եւ Հրատարակիչ*
- ³ *Լեւոն Միլտիան (1897-1982), կրթական եւ Հասարակական գործիչ, փորձագէտ Հաշուակալ եւ Հրատարակիչ*
- ⁴ *Միքայէլ Կիւրեան (1878-1966), վիպագիր, Թատերագիր, Խմբագիր եւ Հրատարակիչ*
- ⁵ *«Արեւիցէ Որ Կը Մտայ Ամէն Երեկոյ (Մոզուսանկրու ժողովածու. «Արեւ» Օրաթերթի Հրատարակման 75 Ամեակին Առթիւ), Գաւիթի, 1990, էջ 94-106.*
- ⁶ *Պաղոս Լուսաբար (1861-1980), բարեխար, Կրթիւնագիր Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան եւ Կարապետ Հայ Ազգային Պատուիրակութեան*

- ⁷ Միհրան Տամատեան (1894-1946), Հասարակական գործիչ, տպարանատէր, հրատարակա-
ցիւր, Թարգմանիչ, ռամկավար ազատական գաղափարախոս
- ⁸ Արշակ Ալպոյանեան, Վահան Թէքէեան Իրր Հանրային Մարզ Եւ Հրատարակաչի, Պէշ-
րուս, 1986, էջ 218-219:
- ⁹ Վիլյամ Դանիելյան, Բառնախոր Արտասան Մամուլը (Մասնագիտական Ակնարկ),
Պէշրուս, 1989, էջ 9: Մարտիրոս Ոսկեան (1892-1990), բանաստեղծ, հրատարակաչի եւ
Հայ ազատագրական պայքարի գուժի կիլիկիա:
- ¹⁰ Մկրտիչ Անդրանիկեան (1861-1930), ՀԲԸ Միութեան հիմնադիրներէն եւ քարտուղար Փո-
ղոս Նուպարի:
- ¹¹ Միհրան Նուպարեան, եղիպտական ունեւոր, որ Արեւի հիմնադրութեան տարիներուն
ստեղծագիտեան էր ՀԲԸՄի Գահիրէի Մասնաճիւղին եւ վարիչ անդամ եւ յիմնական կեդ-
րոնական վարչական ժողովին:
- ¹² Կարապետ Ենչիտեան (1892-1998), եղիպտական պետական գործիչ, Թարգմանիչ, հիմ-
նադիրներէն ՀԲԸՄի:
- ¹³ Ծաղուկ Արթին (1842-1919), թուն անուամբ Յակոբ Արթին Տրաքեան, եղիպտական պե-
տական գործիչ, Եղիպտական կանաւի փոխ-նախագահ, հիմնադիրներէն ՀԲԸՄի:
- ¹⁴ Երուսակ Աղաթան (1890-1936), գիւղատնտես եւ հիմնադիրներէն ՀԲԸՄի:
- ¹⁵ Վահան Մաչեղեան (1871-1907), բանաստեղծ, իրաւաբան, Հասարակական գործիչ, վարիչ-
անարէն ՀԲԸՄի:
- ¹⁶ Տիգրան Հանքեան (1877-1943), Գահիրէի Մեղզոնեան գործաւան տնօրէն եւ Հասար-
կական գործիչ, որ յետագային պիտի զանաք արտանաւէրը Արեւի:
- ¹⁷ Ակնարկութեան Արմենակ եւ Տիգրան կամարական եղբայրներուն, որոնք զբաղան են
ճիւղատար անուամբ:
- ¹⁸ Թովհաննէս Մուսիֆօֆ կամ Մուսիֆեան յիշուլ շրջանին եղան է գտնուողը ՀԲԸՄի
Աղիքանաչիւրի Մասնաճիւղին: Իր անուան էր Հանգիպինք նաեւ Արմենակ կամարա-
կանի Հետ յանուն Աղլալին Պաշտպանութեան Յանձնախումբին 1915ին Տօր: Մաքսուճի
յանձնաւան յաշտպարին ներքեւ, ինչպէսզով որ Բրիտանիա զորք ցամաքականէ կիլիկիա՝ ի
պաշտպանութեան Հարց:
- ¹⁹ Փոլոս Նուպար:
- ²⁰ Տամատեան այլ շրջանին սեփականատէրն էր տպարանի մը եւ ակնարկութեանը էր գե-
րաբիւրի իր տպարանին մաս կազմող տուներուն եւ մամուլին:
- ²¹ Պարթեանեան Մարէն (1876-1921), թուն անուամբ Միսակ Պարտիզպանեան՝ գրող, խմբա-
ցիւր, հրատարակաչի, Հասարակական գործիչ:
- ²² Տաքի. Փարոս Սերոփեան եղան է ՀԲԸՄի առաջին անդամներէն եւ վարան Գահիրէի
Մասնաճիւղի գտնուողանի եւ կեդրոնական վարչական ժողովի փոխ-անդամի պարտա-
կանութեաններ:
- ²³ Թ. Տիգրատուր, եղան պէտք է ըլլայ Փոլոս Նուպարի գործակիցներէն մին եւ ՀԲԸՄի ա-
նձնուան անն մը, որովհետեւ ասիքով մը Փոլոս Նուպար Թովհաննէս Մուսիֆեանի էր
յարանէ Թէ Տիգրատուրի միջոցով գուժար պիտի փոխանցէ Աղլալին Պաշտպանութեան
Յանձնախումբին (Boghos Nubar and the Armenian Question 1915-1918, խմբագրուց եւ
Թարգմանից Վաչէ Նուպարեան, Ուոլթիզմ, 1998, էջ 198):
- ²⁴ Արշակ Ալպոյանեան, էջ 219:
- ²⁵ Նուսի, էջ 220:
- ²⁶ Թէքէեանէն այս եւ յաջորդ մէջերունները անուան են Ալպոյանեանի վերոնշուալ աշ-
խատութեանէն, էջ 220-223:

" Կը ներկայացնենք ազգային կանոնադրը՝ առանց որեւէ լիցուական միջամտութեան, իր
ընտրութեան հարազատութեամբ:

ABOUT THE BIRTH OF THE NEWSPAPER *AREV*
(Summary)

VATCHE GHAZARIAN

The Armenian Democratic Liberal Party (ADLP) daily, *Arev*, is the oldest ADL newspaper in the Diaspora. Its first issue was published on May 11, 1915.

In his article the author unravels the circumstances leading to its publication in Cairo.

Cairo had started replacing Constantinople as the leading center of the Western Armenians. Both the Armenian Revolutionary Federation (ARF) and the ADLP felt the need for a self-owned news organ. The ARF acquired the *Hoosaper* daily and issued its first number on March 30, 1915. Basically to counterbalance this newspaper and the attacks of ARF authors on the ADLP, the Armenian General Benevolent Union, the National Delegation leaders and Boghos Nubar in person, felt the necessity of a newspaper. Thus the *Arev* was acquired.

Basing his study on archival materials, the author details the discussions, concerns, and preparations that took place prior to the inception of *Arev*.

In the second part of the article, the bylaws of the *Arev* publishing company are published.